# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ (ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՔԵՆԴԼ-ԼԻՈՆ Սեքուրիթի_26/2

ք. Երևան «22» դեկտեմբերի 2025թ.

«ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Բ. Գրիգորյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Է. Թովմասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <u>**«Անվտանգության ապահովման»**</u> (Պահնորդական) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5 400 000 (հինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

*4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 8.333%-ը՝ 66,667 (Վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը, որը վերաբերում է 4-րդ եռամսյակի վերջին ամսվա մատուցվելիք ծառայությանը, կարող է Կապարողին տրամադրվել կանխավճարի ձևով՝ պայմանով, որ Կապարողը համաձայնագիր կնքելու պարվա 4-րդ եռամսյակի ընթացքում կներկայացնի կանխավճարի ապահովումը: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կապարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կապարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապարողին վճարումներ չեն կապարվում:*

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

---

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **_11_** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց**

ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
ք. Երևան, 0022, Հր. Աճառյան 31,
ՀՎՀՀ 00877871
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 151001870295010
-------------------------
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարբնիկ, 1փ., 12 տ.
ՀՎՀՀ 00484087
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570071668100100
-------------------------
(ստորագրություն) Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 98111121 / 501 | Անվտանգության ապահովման (պահնորդական) ծառայություններ<br><br>նկարագրությունը՝ ստորև | դրամ | 5400000 | 1 | ք. Երևան, 0040, Հր. Աճառյան 31 | Ծառայությունը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 1/մեկ / տարի ժամկետով 01.01.2026 – 31.12.2026 |

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ժամկետը սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

<u>Տեխնիկական բնութագրի նկարագրությունը</u>՝

ք. Երևան, Հր. Աճառյան 31 հասցեում գտնվող ՔԵՆԴԼ ՍՀԻ հիմնադրամի վարչական շենքի՝ հափշտակումներից և վնասումներից հուսալի պահպանության իրականացում, անվտանգության ապահովում՝ հատուկ պատրաստություն անցած պահնորդի որակավորում ունեցող անձանց միջոցով: Ծառայություն իրականացնող ընկերության պահնորդները պետք է անցած լինեն որակավորման դասընթացներ համապատասխան լիցենզավորված ուսումնական հաստատությունում, հանձնելով որակավորման քննություն ՀՀ Ոստիկանության պահնորդների որակավորումը ստուգող հանձնաժողովում՝ ստանալով համապատասխան վկայական: **«Կատարողը» պետք է ունենա մասնավոր պահնորդական գործունեության իրականացնելու լիցենզիա, ծառայողական զենք, զետեղարան և փամփուշտներ պահելու և օգտագործելու թույլտվություն:**
Պահնորդական ծառայությունն իրականացվելու է մեկ պահակակետում շուրջօրյա, առնվազն մեկ պահնորդի միջոցով, (իրեն ամրակցված հատուկ կամ տեխնիկական միջոցներով) շաբաթական յոթ օր, քանչորս ժամ, առանց բացառության՝ այդ թվում, հանգստյան, տոնական և հիշատակի օրերի ընթացքում:
-Պահնորդների կազմը և փոփոխությունները նախապես համաձայնեցվում են Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով պահնորդների որակավորման փաստաթղթերը:
- Պահնորդների առավելագույն տարիքը չպետք է գերազանցի 60-ը:
**Յուրաքանչյուր օր, շուրջօրյա ռեժիմով, աշխատակիցը պարտավոր է՝**
-Ցերեկային հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել աչքին տեսանելի գույքի և սարքավորումների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակներին (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն), կատարել տարածքի շրջայց առնվազն 3 ժամը մեկ անգամ, միջադեպերի դեպքում կատարել համապատասխան նշում գրանցամատյանում:
-Գիշերային հերթափոխի ընթացքում կատարել տարածքի շրջայց առնվազն 1 ժամը մեկ անգամ, միջադեպերի դեպքում կատարել համապատասխան նշում գրանցամատյանում:
- նախորդ հերթափոխից տեղեկանալ (իր բացակայության ընթացքում) նոր հրահանգների, միջադեպերի մասին,
- «Կատարողը» նյութական պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին նյութական վնաս՝ ունեցվածքի կողոպտման, ոչնչացման, փչացման, հրդեհման կամ այլ հանրորեն վտանգավոր

արարքների արդյունքում: Գողության կամ այլ վտանգավոր արարքով Պատվիրատուին (հասցված) պատճառված նյութական վնասի չափը որոշելու ժամանակ կատարողը մասնակցում է ապրանքանյութական արժեքների հաշվարկմանը:

-կանխել խոշոր նյութական արժեքների տեղաշարժը՝ առանց համապատասխան թույլտվության և փաստաթղթերի;

-արգելել կողմնակի անձանց մուտքը տարածք;

-վերահսկողություն սահմանել ավտոմեքենաների՝ տարածք մուտքի և ելքի նկատմամբ;

- Գրանցամատյաններում համապատասխան գրառումների իրականացում, տարածքում անընդմեջ շրջայցերի իրականացում

-իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանվող անվտանգության և պահակային կանոնները,

-արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում/հրդեհ, հարձակումներ և այլն/, կատարելով նաև անհրաժեշտ ահազանգեր,

-3-5 րոպեի ընթացքում ապահովել հատուկ նշանակության խմբերի առկայություն պահպանվող տարածքում:

Կատարող ընկերությունը պարտավոր է պահպանության ենթակա պահակակետի աշխատակիցներին ապահովել համապատասխան տարբերանշանով (<<Անվտանգություն>> , անգլ.<<Security>>) արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ) և օրենքով թույլատրվող հատուկ միջոցներով (ռադիոկապ կոնկրետ շենքում գործող, էլ. շոկ, ռետինե մահակ , ձեռքի էլ. լապտեր և պահպանության ենթակա պահակակետերում ապահովել առաջին բուժ. օգնության արկղիկներով ) և կապի միջոցներով՝ բջջային կապ և ձեռքի դյուրակիր ռադիոկապ: Բոլոր հերթափոխերի աշխատակիցները պետք է հագնված լինեն նույն տեսքի հատուկ համազգեստով:

- Պատվիրատուի կողմից պահնորդի գործողությունների մեջ թերացում նկատելու դեպքում տեղեկացվում է «Կատարողին», որն էլ իր հերթին պարտավորվում է մեկ հերթափոխի ընթացքում փոխարինել պահնորդին:

- Պահնորդները չպետք է լքեն իրենց հենակետը մինչև համապատասխանորեն չհանձնեն հերթափոխը: Այն դեպքում եթե անրհաժեշտ է անհապաղ փոխարինություն, նրանք պետք է հաղորդեն Վերահսկող Կենտրոնի հերթապահ պատասխանատու հերթապահին, որը պետք է ապահովի հերթափոխի փոխարինումը նոր պահնորդով:

- Պահնորդները ուղղակիորեն պատասխանատու են իրենց տրամադրված, Պատվիրատուին պատկանող բոլոր սարքավորումների համար:

- Եթե տեղի է ունեցել կեղծ տագնապ, ապա Պահնորդը պարտավոր է զեկուցել Վերահսկողության Կենտրոնին և գրանցում կատարել համապատասխան գրանցամատյանում, պահնորդը պարտավոր է նաև կապ հաստատել իր անմիջական պատասխանատուի հետ և տեղեկացնել իրավճակի մասին և իր կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

-Գաղտնիության ապահովման երաշխավորումը:

Կատարողը պարտավոր է վերոնշյալ Ծառայությունները մատուցել **<<Մասնավոր պահնորդական գործունեության մասին>> ՀՀ օրենքի** և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության (պահնորդական) միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

-Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից:

**Կատարողը պետք է ունենա տվյալ ծառայության մատուցման առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ:**

| Այլ պայմաններ | |
|---|---|
| Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները | «Գնումների մասին» ՀՀօրենքով նախատեսված՝<br>**«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն մասնավոր պահնորդական գործունությունը ենթակա է լիցենզավորման:**<br>Անվտանգության ծառայության աշխատակիցները պարտավոր են՝<br>ա. կատարել Պատվիրատուի օրինական հրահանգները, իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության կանոններ.<br>բ.ընթացիկ անվտանգությունն ապահովելիս և արտակարգ իրավիճակները կառավարելիս առաջնորդվել սույն տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներով:<br>գ.լինեն համապատասխան համազգեստով և ունենան բարեհամբույր վերաբերմունք:<br>**Կատարողին արգելվում է ինքնակամ փոխել ծառայության մատուցման տեխնիկական պահանջները:**<br>1. Պահնորդները չպետք է լքեն իրենց հենակետը մինչև համապատասխանորեն չհանձնեն հերթափոխը: Այն դեպքում եթե անրհաժեշտ է անհապաղ փոխարինություն, նրանք պետք է հաղորդեն հերթապահ պատասխանատու հերթապահին, որը պետք է ապահովի հերթափոխի փոխարինումը նոր պահնորդով:<br>2. Պահնորդները ուղղակիորեն պատասխանատու են, բոլոր իրենց տրամադրված և հանձնված սարքավորումների համար պատկանող Պատվիրատուին կամ կատարողին:<br>3. Այն դեպքում եթե նկատվի կամ հայտնաբերվի կասկածելի գործողություններ կամ փորձ ուղղված հավաքելու տեղեկատվություն Պատվիրատուի կամ նրա աշխատակցի մասին կամ նրան ներկայացնող կազմակերպությունների, ապա Պահնորդները անմիջապես պետք է զեկուցեն պատվիրատուին:<br>4. Պահնորդը պատավորվում է ներկայանալ ծառայության վայր սթափ վիճակում<br>5. Միջադեպի դեպքում Պահնորդը պարտավոր է անմիջապես տեղյակ պահել պատվիրատուին և կազմել համապատասխան արձանագրություն: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային
հետազոտությունների ինստիտուտ»
հիմնադրամ
ք. Երևան, 0040, Հր. Աճառյան 31,
ՀՎՀՀ 00877871
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510018702950100

---------------------------
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դարբնիկ,
1փ., 12 տ.
ՀՎՀՀ 00484087
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570071668100100

---------------------------
(ստորագրություն) Կ.Տ